

11902



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան



«31» 10 2024 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 232 - 24

Նախաձեռնող՝

Արդարադատության նախարարության
քրեակադրոհական ծառայություն

Գործունեությունը՝

«Սևան» ԲՀԿ-ի տարածքում նոր մասնաշենքերի կառուցում
Կոտայքի մարզ, Հրազդան համայնք

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 232 - 24

« 31 » հոկտեմբերի 2024թ.

«Սևան» ԲՀԿ-ի տարածքում նոր մասնաշենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայր

Նախաձեռնող՝	Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Հրազդան համայնք

Ներածական մաս. Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կողմից ներկայացված ՇՄԱԳ հաշվետվությամբ նախատեսվում է «Սևան» քրեակատարողական հիմնարկի տարածքում նոր մասնաշենքի կառուցում:

Գործունեությունն իրականացվելու է Հրազդանի համայնքապետարանի կողմից տրամադրված 2023թ. դեկտեմբերի 04-ի N152 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 17 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, ինչպես նաև կառուցապատման նախագծային փաստաթուղթը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Հրազդան համայնքում՝ «Սևան» քրեակատարողական հիմնարկի տարածքում: Տարածքը կառուցապատված է, կից գտնվում են գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ, Մ-2 միջպետական նշանակության ճանապարհ, ինժեներական գծեր, հաղորդակցողիներ:

Գործունեության ենթակա տարածքում առկա են ինժեներական ենթակառուցվածքները՝ գազամատակարարման, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերը:

Համաձայն ներկայացված տեղեկատվության՝ տեղամասի երկրաբանական կտրվածքի հետազոտված խորությունների սահմաններում ներկայացված է գրունտներ՝ 4 տարբեր շերտերով: Ուսումնասիրվող տարածքում հորատված խորությունների սահմաններում գրունտային ջրերի տեղամասեր չեն բացահայտվել և, ըստ ֆոնդային տվյալների, գտնվում են 15 մ-ից ավելի խորը հորիզոններում:



Տարածքում բացակայում են պատմամշակութային և բնության հուշարձաններն, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները: Տարածքում, գործունեության իրականացման նպատակով, ծառեր, թփեր չեն հատվելու:

Տարածքի կլիման չափավոր է, գարունը երկարատև է, զով և խոնավ: Ամառը զով է, միջին ջերմաստիճանը հուլիսին 16°C է, հունվարին՝ -12°C , հարաբերական խոնավությունը՝ 60-70%, քամու միջին արագությունը՝ 3,0-7,0 մ/վ: Տեղումների միջին տարեկան քանակը կազմում է 689 մմ: Տարածքը գտնվում է ծովի մակարդակից 1765մ բարձրության վրա:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- հողամասի ընդհանուր մակերեսը՝ 27877.9 մ² (100%),
- կառուցապատման մակերեսը 0 նիշում՝ 2870.2 մ² (11%),
- կառույցի ընդհանուր մակերեսը՝ 9636.7 մ²,
- անջրանցիկ մակերեսը՝ 5980.2 մ² (22%),
- կանաչապատման մակերեսը՝ 259.6 մ²,

Քրեակատարողական նոր կառույցն իրենից ներկայացնում է ուղղահայաց տեղադրված երկու մասնաշենք, որը հատակագծում ունի «Т» տառի տեսք, և իրարից բաժանված են նստվածքային կարանով: Առաջին մասնաշենքն ուղղանկյուն հատակագծով, 13.4 մ x 33.0 մ առանցքային չափերով կառույց է, իսկ երկրորդ մասնաշենքն՝ ուղղանկյուն հատակագծով, 105.35մx15.0մ առանցքային չափերով կառույց, որը բաժանված է երեք բլոկի՝ նստվածքային կարարներով:

Մասնաշենքերը չորս հարկանի են՝ նկուղային հարկով, որոնց չորրորդ հարկը հանդիսանում է զբոսարան՝ մասնակի ծածկով: Նախատեսվում է հինգ կանգառով մեկ վերելակ՝ 1000.0 կգ բեռնատարողությամբ, առանց մեքենայական սենյակի և 4 կանգառով 1 վերելակ 1000.0 կգ բեռնատարողությամբ՝ 1400-2200 մմ չափսերի՝ մեքենայական սենյակով: Նախատեսվում է 1-ին, 2-րդ և 3-րդ հարկերում 108 բանտախուց՝ յուրաքանչյուրը 2 անձի համար, օպերատիվ կառավարման կենտրոն՝ իր ներքին պարույրածն մետաղական աստիճաններով: Նկուղային հարկում նախատեսվում է պատժախուցեր, նաև սակավաշարժ խմբերի համար, պահասենյակ, խուզարկության սենյակ, հերթապահի սենյակ, 5 հատ սանհանգույցներ, վերելակ, լոգասենյակ, օպերատիվ կառավարման կենտրոն: Նախատեսվող նկուղային հարկը ծառայելու է որպես թաքստոց:

Զբոսաբակի առաստաղային մասը լինելու է կիսով չափ փակ, ե/բ ծածկի տակ՝ ծածկված գունավոր ցինկապատ պրոֆիլավոր թիթեղով՝ մետաղական հիմնակմախքի վրա, իսկ բաց հատվածում՝ հորիզոնական մետաղական ճաղավանդակ: Զբոսաբակի վերին հատվածում նախատեսված է ժամապահի դիտահարթակ:

Տանիքը լինելու է հարթ, գունավոր ցինկապատ թիթեղով՝ պաշտպանիչ ճաղաշարով:

Հսկիչ-անցագրային կետը նախատեսվում է կառուցել 19.8-18.0 մ առանցքային չափերի, 1-4 առանցքների միջև՝ 18.0-19.8 մ առանցքային չափերի, իսկ 1-3 և Ե-2 առանցքների միջև՝ ուղղանկյուն հատակագծով 4.0-12.0 մ անացքային չափերի մեկ հարկանի կառույց, որոնք իրարից բաժանված են նստվածքային կարանով:

Նախատեսվում է տարածքի պարագծով առաջին գծի մետաղական արգելափակոց՝ 4.0 մ բարձրությամբ, հսկիչ անցագրային պատին կից 5.0 մ դեպի ներս ե/բ պարիսպ, երաթբետոնե պարիսպ՝ 6.0 մ բարձրությամբ, որից 6.0 մ դեպի ներս՝ մետաղական արգելափակոց՝ 4.0 մ բարձրությամբ:

Տարածքում նոր ավտոկայանատեղի չի նախատեսվում, օգտագործվում է գոյություն ունեցողը:

Նախատեսվում է շենքի յուրաքանչյուր հարկում տեղադրել հիդրոստատիկ ծանրան ապահովված են լինելու էվակուացիոն ելքերով:



Մասնաշենքերի գազամատակարարումը կատարվելու է համաձայն «Գազարոմ Արմենիա» ՓԲԸ-ի գազաֆիկացման և գազամատակարարման պայմանագրի:

«Սևան» քրեակատարողական հիմնարկի նոր մասնաշենքի ջերմամատակարարումը նախատեսված է կաթսայատնից՝ 9.0 մ x 6.0 մ արտաքին չափերով, քարե պատերով:

Ջերմամատակարարման անընդհանուրությունն ապահովվելու համար, որպես պահուստային վառելիք ընտրված է նաև հեղուկ վառելիք: Կաթսայատանը նախատեսված է օդափոխության բնական ներածման և արտածման համակարգեր:

Նոր մասնաշենքերի ջրամատակարարման համակարգերը միանալու են տարածքում գոյություն ունեցող համապատասխան համակարգերին համաձայն՝ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Համաձայն նախագծի՝ ջրամատակարարումը կատարվելու է տարածքից 400 մ հեռավորության վրա գտնվող ջրագծից, տեղադրվելու է 1 դիտահոր՝ փականներով, մոնտաժն իրականացվելու է Փ90 տրամագծի պոլիէթիլենե խողովակներով, ներքին ցանցի մոնտաժը կատարվելու է Փ70-20 տրամագծի պոլիպրոպիլենե խողովակներով: Նկուղում նախատեսված է տեղադրել 18.0 մ³ տարողությամբ ջրի բաք, որը մղվելու է ջրի պոմպերով: Արտաքին ջրագծի վրա նախատեսվում է տեղադրել հակահրդեհային հիդրանտ, իսկ շենքի ներսում ամեն հարկում հակահրդեհային ծորակներ հատուկ պահարաններում:

Կոյուղու ցանցը միացվելու է նախագծվող կոյուղու դիտահորերին, այնտեղից էլ՝ սեպտիկ հոր: Կոյուղու ցանցն իրականացվում է պոլիէթիլենային de 160-50 խողովակներից ռետինե սեղմիչ օղակներով: Ցանցի ներքին մոնտաժումն իրականացվելու է պոլիվինիլքլորիդե խողովակներից, որոնց միջոցով կոյուղահոսքը հեռացվում է նախագծվող կոյուղու դիտահորեր:

Շահագործման փուլում անձրևի և հալոցքի ջրերը ներքին ջրհոսի ցանցով՝ 50 մմ տրամագծի խողովակներով տանիքներից բնական թեքության շնորհիվ հեռացվելու են դեպի գոյություն ունեցող համակարգ:

Գործունեության իրականացումը լանդշաֆտի ծանրաբեռնվածություն չի առաջացնի, քանի որ գործունեության ենթակա տարածքը կառուցապատված է:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ աշտարակային կունկ, բետոնատար մեքենա, եռակցման սարք, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական նյութերից օգտագործվելու են բետոն, քար, ամրան, ավազ, ապակի, ջերմամեկուսիչ նյութեր և այլն: Առաքումն իրականացվելու է այնպիսի պարբերականությամբ, որը կապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Ամենամոտ ջրային ռեսուրսը Հրազդան գետն է, որը գտնվում է 4.65 կմ հեռավորության վրա: Ուստի մակերևութային և գրունտային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները ջրային ռեսուրսներ:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի համապատասխանում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախագործարանից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Համաձայն կառուցապատման ժամանակացույցի՝ նախատեսվում է անհրաժեշտ դեպքերում նախատեսվում է իրականացնել առավելագույնը 990 օրվա ընթացքում:



Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավեցման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (37 մարդ), ինչը կազմում է 880.11 մ³/շին. ժամ. կամ 0.889 մ³/օր: 840 մ² ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 1672.77 մ³/շին. ժամ կամ 2.449 մ³/օր: Շինարարության փուլում մեքենաների լվացումը նախատեսվում է օրը 2-3 հատ՝ 1 անգամ հաճախականությամբ: Տեղադրվելու են 1 հատ լվացման կետ, ջրի ծախսը կկազմի՝ 2.4 լ/վրկ: Անիվների լվացումից առաջացած կեղտաջրերը կուղղվեն դեպի տարածքում նախատեսված պարզարան, որտեղ կատարվելու է մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:

Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն՝ տեղադրելով բիոզուգարան, խմելու ջուրը ապահովվելու է տարածքում առկա ջրամատակարարման համակարգից: Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, համապատասխան լիցենզիա ունեցող անձանց կամ ընկերությունների կողմից: Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 5 տ տարողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար:

Շինարարական աշխատանքների ընթացքում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի:

Կառուցումը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 7580 մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող 6000 մ³ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Հրազդանի համայնքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ 880 մ³, կարճաժամկետ կապակի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք, իսկ տարածքում առկա 700 մ³ բուսահողը պահեստավորվելու է հետագա օգտագործման նպատակով:

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- քանդման արդյունքում առաջանալու է 3879 մ³ ծավալով շինադր՝ բետոնյա մնացորդների տեքով,
- գործունեության կենցաղային տարածքներից առաջացած խոշոր եզրաչափերի աղբ/շինարարական աղբի տեսքով (ավազի, բետոնի, քարի և այլն)՝ 250 մ³ ծավալով,
- չտեսակավորված աղբ /բացառությամբ խոշոր եզրաչափերի կառուցապատման փուլում՝ 4440 կգ/տարի, շահագործման փուլում՝ 94 320 կգ/տարի:
- փորման արդյունքում հանված խոշոր քարաբեկորներով վտանգավոր թափոններով չաղտոտված հողային զանգված՝ 5800 մ³ ծավալով,
- կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոններ՝ օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե, ալյումինե հաղորդալարեր՝ տարբեր պարունակության և այլն:

Շինարարության փուլում շինարարական աղբը կուտակվելու է համապատասխան անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխվելու է համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ 5 կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր կամ թափափորության դեպքում հանձնվելու է ճանապարհաշինարարական ընկերություններին:

Շինարարության փուլում կենցաղային աղբը կուտակվելու է համայնքապետարանի մետաղական կամ պլաստմասե աղբահավաք տարողության մեջ:



կենցաղային աղբը պարբերաբար հեռացվելու են մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Կառուցման աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում, եզրաքարերի տեղադրում՝ 150-300 մմ, մանրահատիկ ասֆալտ-բետոնապատում՝ 60 մմ հաստության բետոնի շերտով, թեքահարթակի կառուցում: Նախատեսվում է գործունեության ենթակա ազատ տարածքի՝ 259.6 մ² մակերեսի վրա կատարել կանաչապատման աշխատանքներ՝ սիզամարգերի տեսքով:

Տարածքի կանաչապատման աշխատանքները կատարվելու են սիզամարգերի միջոցով՝ ծառերի և թփերի տնկում չի նախատեսվում:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում օրական 2-3 անգամ,
- աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,
- սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրության թաղանթով,
- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկով մեքենաներով,
- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, և դրանց տեխնիկական նորմալ վիճակի շահագործման ապահովում,
- շինհրապարակում քանդման և շինարարության ընթացքում թափոնների տարանջատում,
- մթնոլորտային օդի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների պահպանում և այլն:

Պատճառաբանական եզրահանգումներ. Համաձայն գնահատման հարվետության՝ «Սևան» ԲՀԿ-ի տարածքում նոր մասնաշենքերը կառուցվելու և շահագործվելու են ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են զրոյան մակարդակի վրա և կրելու են ժամանակավոր բնույթ: Փորձաքննական գործընթացի մեթոդներով են



շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, կադաստրի կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը, Հրազդանի համայնքապետարանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ փորձաքննության բոլոր փուլերում Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում նախատեսվող գործունեության վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող կառուցապատման վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Հրազդանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:

ԵԶՐԱՓՈՒԿ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կողմից ներկայացված «Սևան» ԲՀԿ-ի տարածքում նոր մասնաշենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

Արմինե Վարդանյան